# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**17 հոկտեմբերի 2023 թվականի N 4/2-Ա**

**«ՄԵՂՐՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԼՈՒՍԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԲՈՒԺԱԿԱՆ ԳԾՈՎ ՏԵՂԱԿԱԼ ԱՐՄԵՆ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ և 163-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Լ. Վարդանյանի դիմումը՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Լուսինե Վարդանյանին 2023 թվականի հոկտեմբերի 19-ից 27-ը ներառյալ տրամադրել 2022-2023 աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդի մի մասը՝ 7 աշխատանքային օր:

2. Արձակուրդում գտնվելու ընթացքում «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պարտականությունների ժամանակավոր կատարումը վերապահել ընկերության բուժական գծով տեղակալ Արմեն Օհանջանյանին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2023թ. հոկտեմբերի 17
ք. Կապան

Digitally signed by GHUKASYAN ROBERT 3712800290